Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2014 թվական, սեպտեմբերի 27, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Շամամ Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Բորիս Խառատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Կարինե Ալոյան	«Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միության նախագահ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի տարածքային միության նախագահ

Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Տաքսի ծառայությունների ասոցիացիա» ճյուղային միության գործադիր տնօրեն
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ-սոցիալական գործընկերության հարցերով փորձագետ

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Ֆիլարետ Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ջեմմա Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Նարինե Բալայան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Արթուր Կեսոյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
Լենա Հայրապետյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետ Լենա Հայրապետյան

Անուշ Դանիելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Նազիկ Նազարյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվետվությունների ուսումնասիրության վարչության պետ (նիստին մասնակցում էր Հանձնաժողովի անդամ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանի փոխարեն)
Միքայել Փիլիպոսյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Կարինե Մադոյան	Հայաստանի Արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի վարիչ
Հովսեփ Պողոսյան	Փորձագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Սուրեն Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Էմիլ Տարասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Նորայր Բալայան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի

համակարգի իրավական ապահովման
վարչության պետ

Սուրեն Չիբուխչյան

Հայաստանի գործատուների
հանրապետական միության
«Արմենպակ» ճյուղային միության
նախագահ

Հանձնաժողովի անդամներին ուղարկված նիստի օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:**
2. **Զբաղվածության կարգավորման, Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, Երեխայի իրավունքների պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրերի նախագծերի ներկայացում:**
3. **Այլ հարցեր:**

Մինչև օրակարգի նախագծի հաստատման հարցի քննարկումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից կարևորվեց Հանձնաժողովի աշխատանքների առավել հստակ կանոնակարգման հարցի քննարկումը և այս առումով առաջարկվեց Հանձնաժողովի կողմից նախապես որոշել նիստերի անցկացման ժամկետները: Նախարարն առաջարկեց Հանձնաժողովի նիստերը հրավիրել յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո հաջորդ ամսվա վերջին շաբաթվա ուրբաթ օրերը:

Նախարարի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից և Հանձնաժողովը որոշեց.

Հանձնաժողովի նիստերը հրավիրել յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո հաջորդ ամսվա վերջին շաբաթվա ուրբաթ օրերին:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից բարձրացված այն հարցի կապակցությամբ, թե արդյոք կան նիստի օրակարգի հետ կապված հարցեր կամ առաջարկներ, Հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվեց հանել օրակարգի 2-րդ հարցը, այն պատճառով որ արդեն իսկ նշված փաստաթղթերը ներկայացված են ՀՀ կառավարություն:

Բարձրացված խնդրի առնչությամբ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ՀՀ կառավարությունից 3 օր ժամկետ է խնդրվել օրակարգի նախագծի 2-րդ հարցում ընդգրկված հարցերը Հանձնաժողովում քննարկելու համար, և Հանձնաժողովի կողմից առաջարկություններ ու դիտողություններ լինելու դեպքում դրանք հավելյալ կներկայացվեն ՀՀ կառավարություն:

Ա. Ասատրյանի կողմից վերը նշվածի կապակցությամբ Հանձնաժողովի անդամների կողմից հնչեցվեց այն մտահոգությունը, որ շատ դեպքերում Հանձնաժողովի դիտարկումները և

կարծիքները չեն ներառվում Հանձնաժողովում քննարկված փաստաթղթերում և չեն ներկայացվում ՀՀ կառավարությունում:

Նշված մտահոգության վերաբերյալ Ա. Ասատրյանը նշեց, որ այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կարծիքներն ու հայտնած դիտարկումները չեն ներառվում Հանձնաժողովում ներկայացված ու քննարկված փաստաթղթերում ամենևին էլ չի նշանակում, որ այդ առաջարկություններն ու դիտողությունները ընդհանրապես չեն քննարկվում: Ա. Ասատրյանի կողմից կարևորվեց մեկ հանգամանք ևս, որ Հանձնաժողովի որոշումները չեն կարող ՀՀ կառավարության համար պարտադիր բնույթ ունենալ: Դրանք կրում են ընդամենը խորհրդատվական բնույթ: Նշված հարցի փաստաթղթային առավել հստակ կարգավորումն ապահովելու համար Ա. Ասատրյանի կողմից առաջարկվեց նախարարության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին հանձնարարել այսուհետ սոցիալ-աշխատանքային հարաբերություններին առնչվող ցանկացած նախագիծ ներկայացնել սոցիալական գործընկերներին կարծիքի: Բացի այդ առաջարկվեց Հանձնաժողովի կարծիքը պարտադիր ներառել իրավական ակտերի նախագծերի ամփոփաթերթերում:

Ա. Ասատրյանի կողմից ներկայացված առաջարկությունը՝ իրավական ակտերի նախագծերի, նախարարությունից ներկայացվող փաստաթղթերի ամփոփաթերթում Հանձնաժողովի կարծիքը առանձին արտացոլելու վերաբերյալ ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Մինչ նիստի օրակարգի հաստատումը Հանձնաժողովի անդամների կողմից առաջ քաշվեցին քննարկման ենթակա մի շարք հարցեր ևս: Մասնավորապես, Հանձնաժողովի անդամների կողմից կարևորվեցին հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովի նիստերի անցկացման վայրերի և նախագահության ռոտացիան.
2. Հանձնաժողովի նիստերում հարկային ոլորտին առնչվող իրավական ակտերում փոփոխությունների ներկայացում,
3. Հանձնաժողովում կառավարության կողմը ներկայացնող անդամների մասնակցության ոչ պատշաճ ապահովման խնդիրը,
4. Հանձնաժողովի և ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության աշխատանքների միջև կապի ապահովումը:

Հանձնաժողովի անդամների կողմից բարձրացված վերը նշված հարցերի վերաբերյալ Ա. Ասատրյանը նշեց, որ նախարարությունում ԱՄԿ փորձագետի հետ հանդիպման ժամանակ բարձրացվել է Հանձնաժողովի աշխատանքների արդյունավետության բարձրացման, աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման խնդիրը և շուտով այս առումով կլինի նաև ԱՄԿ փորձագետի եզրակացությունն ու առաջարկությունները, որոնք անպայման կքննարկվեն Հանձնաժողովում:

Անդրադառնալով նիստի օրակարգի հաստատմանը՝ Հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվեց խմբագրել օրակարգի 2-րդ հարցը՝ հանելով Երեխայի իրավունքների պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագծի ներկայացմանն առնչվող հարցը և հաստատել օրակարգը հետևյալ հարցերով.

1. **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:**
2. **Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի և Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագծի ներկայացում:**
3. **Այլ հարցեր:**

<u>1.</u> Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանը:

Հակիրճ ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Մասնավորապես նշվեց, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքում նախատեսված փոփոխություններն ու լրացումներն ուղղված են՝

1. իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսդրության դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման տեղիք տվող առանձին նորմերի հստակեցմանը.
2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթները Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի և ԱՄԿ կոնվենցիաների պահանջներին համապատասխանեցնելուն:

Թ. Ավետիսյանի կողմից նշվեց նաև, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հաստատած ժամանակացույցին համապատասխան անցկացվում են նախագծի հանրային քննարկումներ՝ շահագրգիռ լայն խմբերի մասնակցությամբ:

Նախագծի համառոտ ներկայացումից հետո Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց նախագծում ներառել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին կետում փոփոխություն, որով կնախատեսվի «աշխատանքի» բառը փոխարինել «սոցիալ-տնտեսական» բառերով, արդյունքում սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակի համար ունենալով հետևյալ սահմանումը, որ սոցիալական գործընկերության հանրապետական մակարդակը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական բնագավառի հարաբերությունների կարգավորման հիմունքները:

Գ. Մակարյանի կողմից ներկայացված առաջարկության կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ սոցիալ-տնտեսական հարաբերություններին առնչվող հարցերի քննարկումն ընդհանուր առմամբ դուրս է ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորման դաշտից:

Հանձնաժողովի նիստին մասնակցող փորձագետ Հ. Պողոսյանի կողմից բարձրացվեց ՀՀ կառավարության որոշումներով աշխատանքային օրերը տեղափոխելու ժամանակ առաջացող խնդիրները: Մասնավորապես, երբ «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի և «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կառավարությունը Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված՝ տեղափոխում է աշխատանքային օրերը, ինչպես նաև ազգային տաղավար տոներին հաջորդող աշխատանքային օրը տեղափոխում է նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը, առաջանում են խնդիրներ կապված արտաժամյա աշխատանքի առաջացման, շաբաթական աշխատաժամանակի նորմալ

տևողությունը գերազանցելու, արտաժամյա աշխատանքի համար համապատասխան վճարում կատարելու հարցերի հետ:

Անդրադառնալով բարձրացված խնդրին Թ. Ավետիսյանը նշեց, որ իրականում իսկապես կա խնդիր, որի լուծման համար անհրաժեշտ կլինի կազմակերպել լրացուցիչ քննարկումներ:

Ընդհանրացնելով և հաշվի առնելով այն, որ նախագծի վերաբերյալ սոցիալական գործընկերներն արդեն իսկ գրավոր ներկայացրել են իրենց առաջարկություններն ու դիտողությունները և որ նախատեսվում է նախագծի բանավոր քննարկումներ սոցիալական գործընկերների մասնակցությամբ Հանձնաժողովը որոշեց.

1. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունել ի գիտություն: Կողմերի մասնակցությամբ քննարկված և լրամշակված նախագիծը մեկ անգամ ևս ներկայացնել Հանձնաժողովի քննարկմանը:

<u>2.</u> Օրակարգի 2-րդ հարց.

Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի նախագիծը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանը: Նշվեց, որ 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը և Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի նախագիծը մշակվել է այդ օրենքի դրույթներին ու պահանջներին համապատասխան և առաջին անգամն է, որ զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագիրն ունենում է մարզային բաշխվածություն: Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի նախագծի համաձայն՝ յուրաքանչյուր ծրագիր ունի մոնիթորինգի և գնահատման հստակ ցուցիչներ: Ծրագրով հստակ ամրագրված են շահառուների առաջնահերթությունները: Համառոտ ներկայացվեցին ամենամյա ծրագրում ներառված ծրագրերն ու ծառայությունները:

Ներկաների, մասնավորապես Բ. Խառատյանի կողմից ներկայացվեց այն մտահոգությունը, որ գործազրկության նպաստի վճարման դրույթը «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում ամրագրված չլինելը հակասություն ունի ՀՀ Սահմանադրության հետ, այն իմաստով, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

Բարձրացված հարցին Ա. Ասատրյանի և Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված վերևում վկայակոչված դեպքերում սոցիալական ապահովության իրավունքը գործող օրենքի և ծրագրերի դրույթներով էլ է ապահովվում:

Հստակեցվեց, որ նախկինում վճարվող գործազրկության նպաստն ըստ էության գումար էր, որը պետք է օգներ քաղաքացուն աշխատանք փնտրելու հարցում:

Ըստ էության նոր օրենքով և օրենքի դրույթներին համապատասխան մշակված գործազրկության ծրագրերով, արդեն իսկ իրացվում է նշված սոցիալական ապահովության իրավունքը: Մասնավորապես, առավել մանրամասն պարզաբանվեց աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման ծրագիրը, որն ըստ էության բովանդակային առումով ունի նույն նպատակը, ինչ նախկինում վճարվող գործազրկության նպաստն էր:

Նիստի օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ հանձնաժողովը որոշեց.

Քննարկելով Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի նախագիծը և դրա վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի դիրքորոշումը՝ տալ դրական եզրակացություն:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագծի կապակցությամբ Հանձնաժողովի անդամների կողմից առաջարկվեց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրի նախագիծը նախապես ներկայացված եղել է սոցիալական գործընկերներին կարծիքի, նախագծին տան դրական եզրակացություն:

Հիմնվելով ներկայացված առաջարկության վրա՝ Հանձնաժողովը որոշեց.

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագծին տալ դրական եզրակացություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**